



# Ազգարարութեան Trumpet's Sound Իհող

54-րդ ՏԱՐԻ, ԱԽԱՏՎԱԼԻԱ

ՍԵՊԵՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023



**«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»**  
Երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝  
հովիտ Հրաչ Գույուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



## Բովանդակութիւն

«Խնդացողմերուն հետ խնդացէք  
Եւ լացողմերուն հետ լացէք» ..... 3

*Հովիտ Հրաչ Գույուճեան*

Սաղմոս 4 ..... 5

*Տնա Մրումը*

Օգտագործենք պատեհ առիթները ..... 7

*Քաղուած*

Ողորմութեան խոստում ..... 9

*Քաղուած*

Յոր (1) ..... 13

*Տնա Մրումը*

Փոփոխութիւններ ACM-ի մեջ ..... 15

*Soppy Դանիել Շեյմս*

Կազմի նկարը՝ Տիլիման,  
Shutterstock:

- Աղօթեցէք Աւետարանի կարիքն ունեցող Արցախի 120,000 փախստականներու համար, ովքեր այժմ Հայաստանի մէջ կը գտնուին:
- Աղօթեցէք սնունդի հայթայթման համար, որը մեծապէս անհրաժեշտ է փախստականներու գոյատեւման համար:
- Աղօթեցէք փախստականներու համար, ովքեր շուտով պիտի դիմագրաւեն ձնեռուայ ցուրտ պայմանները:
- Աղօթեցէք իրենց սիրելիները կորսնցուցած սգաւորներու համար: Աղօթեցէք բազմարիւ այրիներու եւ որբերու համար:
- Աղօթեցէք ACM-ի իմաստութեան համար, որպէսզի գիտնանք թէ որտեղ եւ ինչպէս օգնութիւն ցուցաբերենք:
- Աղօթեցէք Հայաստանի մեր գործընկերներու համար, որ Սուրբ Շոգհով առաջնորդուին:
- Աղօթեցէք աշխարհի խաղաղութեան համար:
- Աղօթեցէք Տիրոջ արքայութեան գալու համար:

**Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:**

## «Խնդացողներուն հետ խնդացէ՛ք Եւ լացողներուն հետ լացէ՛ք»

**Հռոմ. 12:15**

**Ի**՞նչ է պատահած մեր աշխարհին: Ականատես ենք այնպիսի բաներու, որոնք նախկինուն չենք տեսած, չենք լսած. «Վասն զի ազգի վրայ պիտի ելլէ ու բազաւորութիւն բազաւորութեան վրայ եւ տեղ տեղ սովեր ու մահտարաժամեր ու երկրաշարժներ պիտի ըլլան: Սակայն ասոնք ցաւերուն սկիզբն են: Այն ատեն ձեզ նեղութեան պիտի մատնեն եւ ձեզ պիտի սպաննեն ու իմ անուանս համար բոլոր ազգերուն ատելի պիտի ըլլաք»:

Աշխարհի հայեացքն ուղղուած է Սերձաւոր Արեւելքին: Ազրպէյճանը շրջափակեց 120,000 Արցախահայութեանը, որոնք դարեր շարունակ ապրած են իրենց հայրենիքի՝ Լեռնային Ղարաբաղի մէջ: Ելեկտրականութիւնն ու այլ մատակարարումները 90 օր անջատուած մնացին: Զկայ զեռուցում, սնունդ, վառելիք, աշխատանք, դեղորայք: Բոլորը կ'ապրէին անյայտութեան վախի մէջ, իսկ յետոյ ոմբակոծութիւնները սարսափ տարածեցին ժողովուրդին մէջ եւ անոնք ստիպուած լքեցին իրենց հայրենիքը: Ընդամենը մի քանի շաբաթ առաջ տարբեր տարիքի շուրջ 120,000 մարդ լքեց իրենց բնօրրանը: Անոնք բողեցին իրենց խանութները, հողն ու անասունները՝ Հայաստան վախչելու համար: Գրեթէ բոլորը Հայաստան ժամանեցին միայն իրենց վրայ եղած հագուստով: 2,5 միլիոն բնակչութիւն ունեցող երկիրը, որու 30%-ը աղքատութեան շեմին է, ընդունեց 120,000 վախսատականներու հոսք:

Վերջին 25 տարիներուն մէջ Հայ քրիստոնէական առաքելութիւնը հաւատարմօրէն ծառայեց Հայաստանի կարիքաւոր ժողովուրդին, սակայն մենք պատրաստ չենք նման աղէտ դիմագրաւելու: Մարդիկ ամէն օր կը բակեն մեր դուռը, ցանկացած տեսակի օգնութիւն կը խնդրեն. սնունդ, հագուստ, վարձակալութեան օգնութիւն, դպրոցական պայուսակներ մանուկներու համար, ձմեռային տաք հագուստ: Մարդիկ խորհրդատութեան կարիք ունին, քանի որ գրեթէ իրաքանչիւր ընտանիք զոհեր թողած է իր ետին:

Մենք կուլանք լացողներու հետ, բայց Հայաստանի մեր աշխատավիցներու համար շատ ծանր էր: Երկու օրուայ մեջ 10,000\$-ի արժուդրեամբ սնունդ բաժնեցինք 240 մարդկանց: Կը խնդրենք աղօքքով աջակցել մեզ, քանի որ այս մարտահրաւերը մեր կարողութիւնն շատ աեւիլ ծանր է: Մենք նաև շուտով նոր հազուսով բեռնուած ուղղերեն պիտի դրկենք Հայաստան, քանի որ Հայաստանի կառավարութիւնը սահմանափակում դրած է օգտագործուած ապրանքի վրայ: Բեռնափոխադրումը կ'արժէ 18,000\$: Եթէ կարող էր եւ ցանկութիւն ունիք օգնելու, ապա կը խնդրենք մեզ հետ կապ հաստատել այս հասցեն՝ [info@acmaust.org](mailto:info@acmaust.org):

Այնուամենայնիւ, այս բոլոր արցունքներու միջով մենք ուրախութիւն կը վայելենք՝ իմանալով, որ Անոր գալուստը մօտ է, եւ շուտով պիտի տեսնենք Զինք մեր աչքերով եւ ծունկի պիտի գանք ու երկրպագենք Զինք:

Թո՞ղ Տէրը ձեզ բոլորիդ ապահով պահէ մեր Տէր Յիսուսի մեջ:

Հ. Գ.

**«Եղայրնե՛ր, ոչ թէ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի,  
հապա այն հին պատուիրանքը որ սկիզբէն ունէիք:  
Հին պատուիրանքը այն խօսքն է, որ դուք սկիզբէն լսեցիք:  
Դարձեալ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի,  
որ ճշմարիտ է անոր մէջ ու ձեր մէջ. վասն զի խաւարը  
կ'անցնի ու ճշմարիտ լոյսը արդէն կ'երեւնայ:  
Ան որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է ու իր եղայրը կ'ատէ,  
անիկա տակաւին խաւարի մէջ է: Ան որ իր եղայրը կը սիրէ,  
լոյսի մէջ կը բնակի ու իր մէջ գայթակղութիւն չկայ.  
Բայց ան որ իր եղայրը կ'ատէ խաւարի մէջ է  
ու խաւարի մէջ կը քալէ ու չի գիտեր թէ ո՞ւր կ'երթայ,  
վասն զի խաւարը անոր աչքերը կուրցուցեր է»:**

Ա. Յովհ. 2:7-11

## Սաղմոս 4

4-րդ Սաղմոսը մի մարդու աղօքք է, որուն մարդիկ ուզած են կործանել: Ան իր նեղութեան մէջ Աստուծոյն դիմեց ու հանգստութիւն գտաւ: Ան փորձառեց Տիրոց օրհնութիւնը եւ կարողացաւ հանգստանալ Անոր բարութեան մէջ:

Ըստ Երեւոյթին, թէեւ Տէրը հանգստացուց զինք, սակայն Դաւիթը ստիպուած էր եւս մէկ անգամ Տիրոջը դիմել օգնութեան համար: Հեշտ է պատկերացնել, թէ երբ սա կարող էր տեղի ունեցած ըլլալ: Մէկ անգամ չէ, որ ստիպուած էր Սատուրի դաժան նախանձէն փախչել, եւ նոյնիսկ երբ ժամանակ առ ժամանակ վերջինս ընդունած էր իր սխալ ըլլալը, սակայն շատ չանցած Դաւիթը կրկին փախուստի դիմած էր՝ անոր չար մտադրութիւններէն խուսափելու համար: Եւս մէկ անգամ Դաւիթը արդարութեան Աստուծմէ կը խնդրէր լսել զինք ու իր ողորմութիւնը տարածել իր վրայ:

Դաւիթը կը հարցնէ, թէ մարդիկ մինչեւ ե՞ր պիտի փնտռեն իր փառքը ամօրի վերածել: Մինչեւ ե՞ր պիտի փորձեն կործանել իրեն կամ գոնէ նուաստացնել զինք: Իրեն հակառակողներն իրենց միտքը դրած էին բացարձակապէս ոչ մէկ արժէք ունեցող բաներու վրայ:

Այս մարդիկ պէտք է իմանային, որ Դաւիթի դէմ իրենց բոլոր գործողութիւնները պիտի չյաջողի: Տէրն արդեն Իր համար զատած էր Աստուծապաշտներուն: Եթէ Աստուծոյ ձեռքը պաշտպանէ Դաւիթին, ան ապահով կը մնար: Այս գիտակցութեամբ Դաւիթը բացարձակ հանգմունք ունիր, որ Աստուծ պիտի լսէ ու պաշտպանէ զինք:

Այնուամենային, մեզ կը հետաքրքրէ այն հարցը, թէ մենք ինչպէ՞ս պէտք է արձագանքնենք նման իրավիճակներու ժամանակ, կամ ինչպէ՞ս պէտք է արձագանքնենք անաստուած մարդկանց նենգութիւններուն: Դաւիթը կը նշէ չորս բան, որ պէտք է հետեւենք.

- **Բարկացէ՛ք եւ մեղք մի՛ զործէ՛ք:** Որոշ մարդիկ կը սորվեցնեն թէ բարկանալը մեղք է, մոռնալով, որ Աստուծ ամէն օր բարկացած է ամբարիշտներուն վրայ: Երբ Պողոսը Եփես. 4:26-ին մէջ կրկնեց այս իրահանգը, ան աւելցուց ըսելով. «Արեւը ձեր բարկութեանը

վրայ մարդ թող չմտնէ»: Կայ այսպէս կոչուած արդար բարկութիւն:

- **Խօսեցէ՛ք սրբերնուդ հեկ չեր անկողիններուն վրայ ու լուցէ՛ք:** Ի՞նչ բաներու շուրջ կը խորհինք: Լաւ է խորհրդածել մեր Աստուծոյ շնորհալի ողորմութիւններու շուրջ, մտածել մեր հանդէա Իր ցուցաբերած ողջ բարութեան եւ սիրոյ շուրջ: Եթի այդպէս ընենք, մենք կը տեսնենք, որ մեր սրտերը կը հանդարտին Տիրոց ներկայութեան մէջ:
- **Արդարութեան զոհեր մատուցանեցէ՛ք:** Թէեւ այլեւս մեղքի համար կրկնուող զոհաբերութիւններ չենք մատուցէր, այնուամենայնի կան զոհեր, որոնք Տիրոջը անընդհատ կը մատուցենք: Անոնց շարքին կը պատկանի զոհաբանութեան զոհը՝ մեր շրթունքներու պտուղը (Եթր. 13:15):
- **Տերոջը յուսացէ՛ք:** Իզուր է մարդուն վստահելը. մեր վստահութիւնը պէտք է միայն Տէր Աստուծոյ վրայ ըլլայ:

Շատեր կը փորձեն յուսահատեցնել մեզ՝ հարցնելով, թէ ո՞վ մեզ բարութիւն պիտի ընէ: Դաւիթը համաձայն չէ պարտուիլ անոնց խօսքերէն: Փոխարէնը, ան աղօթքով դիմեց Տիրոջը՝ խնդրելով բարձրացնել Իր դէմքի լոյսը իր վրայ: Եթէ Տէրը բարեհաճութեամբ նայի մեզ, Ան կը պահէ մեզ մեր բոլոր նեղութիւններուն մէջ: Ան մեր սրտերուն մէջ ուրախութիւն մը կը դնէ, որն աւելի մեծ է, քան այն ուրախութիւնը, որը որոշ մարդիկ կունենան երբ անոնց ցանքը առատ բերը կուտայ: Որպէս արդիւնք՝ Դաւիթը կարողացաւ հանգստանալ Տիրոց ապահովութեան մէջ:

Արդեօ՛ք սորված ենք սաղմոսերգուի պէս Տիրոջը նայիլ: Դժուարութիւններու ժամանակ արդեօր նախ Տիրո՞ջը կը փնտոնենք: Եթէ այդպէս է, ապա կարող ենք հանգիստ պառկիլ՝ իմանալով, որ Տէրը մեզ ապահով կը բնակեցնէ Իր խնամքին տակ:

Տնն Սրորմբ



## Օգտագործենք պատեհ առիթները

«Վերջերս Աստուած առիթը շնորհեց անարժանիս որ բանտին մէջ վկայեմ ամէնազէշ մեղաւորներէն մէկուն» կը պատմէ Պիլ անունով հաւատացեալ բանտարկեալ մը:

«Բոլոր բանտարկեալները իրենց խցիկները վերադարձած էին բացի ինձմէ: Կէսօրէ ետք ժամը չորսն էր: Այդ պահուն էր որ բոլոր կալանաւորները կը համրուէին: Ես բանտի բուժարանն էի, ցախ դեղահատներ առնելու: Վերջին անձն էի, բայց դեղազիրս չէին գտներ: Ուստի առանձին կը սպասէի: Յանկարծ դուռը բացուեցաւ եւ երեք պահակներ, բանտարկեալի մը ընկերացած, ներս մտան: Ան կարմիր համազգեստ հազած էր, որը կը նշանակէր թէ ծայրագոյն պահպանորեան շէնքն էր: Անոր ոտքերը եւ ձեռքերը շղթայուած էին: Երբ քաշքուելով բուժարան մտաւ, պահակները զարմացան, զիս հոն տեսնելով: Կատաղի եւ շատ վտանգաւոր բանտարկեալները այսպիսի ժամերուն կը տեղափոխէին, որ ուրիշներու չի հանդիպէին: Այս մարդը Պրայըն Սրէչըլն էր, մահապարտներու շարքէն: Բուժարան թերուած էր, որ ֆիզիքական վիճակը իմանային, նախքան իր մահապատիժը, որ քանի մը օրէն ափտի գործադրուէր: Գիտէի անոր ով ըլլալը, ուստի մինչ պահակներուն հետ հոն նստած էի, սկսայ հետը խօսիլ: Սկիզբը պատհակները չուզեցին որ խօսիմ, բայց անոնցմէ մին զիս կը ճանչնար եւ արտօնեց որ խօսիմ Պրայընին հետ: Նախ դժուար էր խօսակցութիւնը սկսիլ: Դիրին չէ խօսիլ մէկու մը որ մի քանի օրէն պիտի մեռցուէր: Իրեն ըսի որ պատահական չէ որ ես հոս եմ այս ժամուն: Քիչ ատենէն անօգնական պիտի ըլլար ան: Հարցուցի երէ Տէրը գիտէ՞՞ր: Ըսաւ թէ լսած էր Աստուծոյ մը մասին, բայց Զայն չէր ճանչնար: Բոլոր կեանքը անձնակեղրոն եւ չար մէկը եղած էր: Քովս գտնուող խոստումներու գրքոյկէն կարգ մը հոգեւոր համարներ կարդացի, որոնք մեղքի եւ փրկութեան մասին էին: «Երէ մէկը մեղք գործելու ըլլայ, Հօրը քով բարեխոս ունինք Յիսոս Քրիստոս արդարը: Անիկա մեր մեղքերուն քատորին է, եւ ո՛չ միայն մերիններուն, հապա բոլոր աշխարհին ալ»: (Ա Յովհ. 2:1-2) Պրայընին ըսի. «Յիսոս թեզ կը սիրէ, նոյնիսկ քու մեղքերովիդ: Ան թեզ շատ կը սիրէ եւ կ'ուզէ որ փրկուիս»: Աշքերուս նայեցաւ եւ ըսաւ. «Զի՞ս»: Այո՛, ըսի

Յիսուս քեզ կը սիրէ եւ բացատրեցի թէ ինչպէս կրնար ներում ստանալ ու փրկուիլ խոստովանելով մեղքերը, ընդունելով որ Յիսուս խաչին վրայ իր տեղը մեռաւ, զինք փրկելու յափտենական դժոխքէն:

Ծիշդ այդ պահուն բանտի բժիշկը զինք գրասենեակը կանչեց: Պահակներուն հարցուցի թէ կրնայի՝ մի քանի հոգեւոր թերքիկներ տալ իրեն: Երբ բոյլտուութիւն ստացայ, անմիջապէս Պրայընին գրպանը դրի Աստուծոյ Խօսքէն հատուածներ: Երբ կը հեռանար, դրան առաջ կանգ առաւ եւ ինձի դառնալով հարցուց. «Քրիստոս կը ներէ՝ ինձի»: «Այո՛, Յիսուս կը ներէ քեզի» պատասխանեցի վստահութեամբ եւ անսենեակ մտաւ: Ես սերմը ցանեցի: Կը հաւատամ որ օր մը կրնամ այս մարդը երկինքը տեսնել: Պրայըն Քրիստոսը ճանչնալու հաւանութիւնը ունեցող վերջին անձն էր: Գէշերուն գէշը: Սակայն Աստուած այնքան սիրեց աշխարհը որ եթէ ինձի պէս մեղաւորը փրկեց կարող էր Պրայընն ալ փրկել:

Մի քանի վայրկեան վերջ հիւանդապահուիին եկաւ եւ իմ դեղս ձեռքին մէջն էր: «Կը ցախմ որ քեզ սպասցուցինք» լսաւ: «Դեղագիրդ քու պահարանիդ մէջն էր: Կը զարմանամ թէ ինչպէս զայն չի տեսանք առաջին անգամ»: Անկասկած Աստուծոյ հզօր ձեռքը ասոր մէջ էր: Ամենակալէն շատ բաներ կը ստանանք երբ Իր Սիածին Որդին կ'ընդունինք որպէս մեր Փրկիչը: Ակիզքը չենք անդրադառնար այդ բոլոր օրինութիւններուն որոնք մեզի տրուած են: Սիայն ժամանակի ընթացքին է, որ Հօր Աստուծմէ մեզի պէտք եղած գիտութիւնը եւ իմաստութիւնը կը շահինք գիտակցելու թէ ինչ բանը իրական արժէք ունի: Կըրնամ վկայել թէ ամբողջ աշխարհը եւ ինչ որ անոր մէջ արժէքաւոր կը սեպուի բոլոր խարկանք է: Երեսունութը տարիներ աշխարհի շափանիշով ապրեցայ եւ այդ ընթացքը զիս կործանումի առաջնորդեց: Սեղքը զիս խորտակեց եւ շատեր որոնք իմ շուրջու էին, քանի որ ես իմ անձիս համար կ'ապրէի: Ապրեցայ աշխարհի մէջ արժէք ունեցող բաներու համար: Ինչ որ դրամով կը գնուէր՝ ունի - նիւթական գանձ, բանկարժէք ինքնաշարժներ եւ փառաւոր տուներ: Այս բոլորը միայն վիշտ պատճառեցին ինձի եւ կեանք մը որ անարժէք էր ինձի եւ շորջիններուս համար:

Օր մը, առաջին անգամ ըլլալով լսեցի փրկութեան լուրը յատակօրէն: Այդ ժամանակ գիտակցեցայ թէ այդ էր ճշմարտութիւնը: Ասիկա իմ

հասկացողութնէս չեր, այլ Սուրբ Հոգիին ներզործութենէն: Հասկցայ թէ ահաւոր մեղաւոր մըն եմ եւ փառաւոր Փրկիչին պէտք ունիմ: Զրիասուր ընտրեցի որպէս իմ անձնական Փրկիչս, Յունիս 2, 1974 թ.-ին: Այսպէս սկսաւ հոգեւոր կեանքս եւ իմ արժեւորումներս սկսան փոխուիլ: Ըստիքս այս է որ աշխարհի բոլոր բաները ունեի, բայց անոնք զիս բնաւ չի գոհացուցին: Հիմա Աստուծոյ բաները ունիմ եւ կը փափաքիմ հնազանդ եւ հաւատարիմ ծառայ մը ոլլալ: Անկէ ի վեր, Տիրոջը անհուն սէրը, գերազանց շնորհը եւ սրանչելի փրկութիւնը ունենալով, ես օրինուած հարուստ մէկն եմ: Փառք Տիրոյ:

«Խօսքը քարոզէ մտադրութեամբ, գործիդ պարապէ ատենին ու ատենէն դուրս» (Բ Տիմ. 4:2):

«Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փնտոելու որոնց գլուխը ես եմ» (Ա Տիմ. 1:15):

Քաղուած՝ «Աւետարեր ձիթենին» գրքեն

## ***Ողորմութեան խոստում***

**Բ Թագ. 9:1-7**

1942, Մարտ 11, Փիլիպեան կղզիներու մէջ քաղաքական վիճակը շատ վատ էր: 2-րդ Համաշխարհային պատերազմի ժամանակ էր եւ ամերիկեան զօրքերը կը ջանային պահպանել Փիլիպեան կղզիները՝ Շափոններու դէմ: Երբ յատակ էր որ յանձնուելու ժամանակը եկած էր, ճենըրը ՄըքԱրքիրը ըսաւ իր զօրքին. «Վիճակը վատ է, պէտք է յանձնուինք, բայց ձեզի խոստում կուտամ որ դարձեալ պիտի վերադառնամ»: Իսկապէս ալ երկուրուկէս տարիներ եսոք ճենըրը ՄըքԱրքիրը վերադարձաւ Փիլիպեան կղզիներ: Ան խոստում տուաւ եւ խոստումը պահեց: Պարտուեցան, յանձնուեցան, սակայն անոնց խոստացաւ վերադառնալ, յոյս ներշնչելով որ յաջորդի յաղթութիւն պիտի ունենան:

Բ Թագ. 9-րդ գլխուն մէջ կը կարդանք Դաիթ բազաւորի մասին որ Սաւուղի տունէն մարդ կը կը փնտոէր բարերութիւն ընելու համար:

Ինչպէս գիտէք, Խարայէլի առաջին թագաւորը Սաւուղ էր: Հակառակ որ Աստուած էր Խարայէլի թագաւորը եւ նպատակ չ'ունէր անոնց վրայ թագաւոր դնելու, ժողովուրդը Սամուէլ մարգարէին զացին ու պնդեցին որ թագաւոր մը ունենայ իրենց վրայ: Սամուէլ դժողոհեցաւ, բայց Տէրը Սամուէլի ըսաւ որ որովհետեւ զԻնք չեն ընդունիր իրեւի իրենց Թագաւորը անոնց թագաւոր մը պիտի տար: Տէրը Սաւուղը թագաւոր դրաւ Խարայէլի վրայ, բայց տարիներ ետք Սաւուղ Տէրոցը խօսքը մտիկ ընելէ դարրեցաւ ու Տէրը ըսաւ Սաւուղի. «Քանի դրւն զիս կը մերժես, Ես ալ քեզ ու քու զաւակներդ կը մերժեմ ու քու թագաւորութեանդ շարունակուիլը»: Հետեւարար, Տէրը Սամուէլ մարգարէն դրկեց Դաւիթը թագաւոր օծելու: Մինչեւ Դաւիթը թագաւոր եղաւ 12 տարիներ անցան որու ընթացքին Սաւուղ անդադար Դաւիթը հալածեց սպաննելու համար: Սաւուղի որդին՝ Յովնաթան Դաւիթը կը սիրէր եւ օր մը այսպէս արտայայսուեցաւ անոր. «Եթէ հայրս քեզի չարուրին ընել ուզէ, քեզի պիտի յայտնեմ ու քեզ պիտի արձակեմ որ խաղաղութեամբ երթաւ, ու ոչ թէ միայն իմ կենդանութեանս ատեն ինծի Տիրոց ողորմութիւն ընես որ չմեռնիմ, այլ քու ողորմութիւնն իմ տունէս յախտեան չկտրես, ոչ ալ այն ատեն երք Տէրը Դաւիթի բոլոր բշնամիները երկրի վրայէն վերցնէ»: Յովնաթան գիտէր որ Տէրը մերժած էր Սաւուղը եւ անոր զաւակները թագաւոր ըլլալէ եւ Դաւիթը ընտրած էր, որեմն Յովնաթան կը խնդրէ որ Դաւիթը խոստանայ իրեն եւ իր զաւակներուն ողորմութիւն ցուցնել:

Դաւիթ կը խոստանայ: 12 տարիներու ընթացքին Դաւիթ փախստական կեանք կ'ապրի. Պալատներու մէջ ապրելու տեղ կ'ապրի քարայրներու մէջ: Սակայն Տէրը խոստացած էր եւ 12 տարիներ ետք Դաւիթը թագաւոր կ'ըլլայ: Թագաւոր ըլլալէ ետք Դաւիթ օր մը կը յիշէ որ Յովնաթանի խոստացած էր անոր ընտանիքին ողորմութիւն ընել: Դաւիթը փնտողել կուտայ որ Սաւուղի տունէն մէկը կա՞ր: Միբա անունով ծառայ մը կը գտնեն եւ Միբա կը տեղեկացն որ Յովնաթան ուորերը կաղ որդի մը ունէր Լաղարարի մէջ: Դաւիթ կը հրճուի յիշելով Յովնաթանի սէրը իր հանդէաւ եւ կը փութայ իրագործելու իր խոստումը: Յովնաթանի զաւակին անունը Սեմփիփոսք էր որ Եբրայերէնի մէջ կը նշանակէր «ամօթալի»: Երբ թագաւորին ծառաները կ'երթան զինք քերելու, Սեմփիփոսք կը վախնայ որ թագաւորը զինք սպաննել պիտի տայ: Ան Լաղարարի մէջ կը պահուըտէր որ դարձեալ Եբրայերէնով կը նշա-

նակե «անապատ տեղ մը» եւ չէր գիտեր Դաւիթի նպատակը ինչ էր: Դաւիթ երբ կը տեսնէ զինը կ'ըսէ. «Մի վախնար, քու հօրդ Յովնարանի սիրոյն քեզի բարերարութիւն պիտի ընեմ»: Երբ Սատու եւ Յովնարան կը մահանան Մեմփիփոսքէի հոգատարը զինը կը փախցնէ հեռու տեղ մը մահուրնէ ազատելու համար: Երբ կը վազէին հոգատարը կ'իյնայ նաեւ Մեմփիթոսքէ այլ հետք ու երկու ոտքերը կաղ կը դառնան: Դաւիթ իբրեւ թագաւոր իրաւասութիւն ունէր սպաննել տալու իր թշնամին ընտանիքը, սակայն Յովնարանի հանդէա ունեցած սիրոյն համար Մեմփիփոսքէի ողորմութիւն ցոյց կուտայ: Այս պատկերը մեր Տերոջը մեզի հանդէա ունեցած սիրոյն կը նմանի: Ամենակարող Տերը մեզի կ'ըսէ «Ես ձեզ ստեղծեցի բայց դուք ինկաք Երեմի պարտէզին մէջ: Հինա կաղ էք եւ չէր կրնար քալել ու կ'ապրիք այնպիսի տեղ մը Լադարարի նման անապատի մը մէջ: Ես ձեզի համար այդ չստեղծեցի այլ՝ Պարտէզը, բայց դուք ինձմէ հեռացաք: Սակայն ես ձեզի խոստում ըրի որ ձեզի համար միջոց մը, ճամբայ մը պիտի ստեղծեմ որ կարենաք իմ ողորմութիւնս ստանալ, իմ զաւկիս՝ Յիսուս Քրիստոսի սիրոյն համար»:

Յովի. 3:16-ին մէջ կը կարդանք որ Աստուած սկիզբէն սիրեց աշխարհը եւ միջոց մը ստեղծեց Քրիստոսը դրկելով ինձի եւ քեզի համար մեռնելու: Տերոջը Խօսքը կ'ըսէ Եսայեայ 64:4-ին մէջ որ պիղծ բանի պէս եղանք, որ մեր բոլոր արդարութիւնները աղտոտ լարի պէս էին, այսինքն՝ ամօրալի վիճակ ունէինք, կաղ էնք, Մեմփիփոսքէ էինք, բայց Տերը ըսաւ. «Տակաւին ձեզ կը սիրեմ, տակաւին իմ խոստումս պիտի յարգեն»: Եւ Եսայեայ դարձեալ կ'ըսէ որ մենք մոլորեցանք ոչխարներու պէս, սակայն մեր բարի Հովիր եկաւ մեր ետեւէն որ մեզ փնտուելու գոտնէ: Աստուած սիրեց մեզ եւ պատրաստ է մեզի մեր կաղ վիճակէն ազատելու եւ իր ողորմութիւնը շնորհելու, մեզ բժշկելու եւ նոր կեանք տալու: Երբ Դաւիթ Մեմփիփոսքէն իր առջեւ քերաւ, ըսաւ անոր. «Մի վախնար, քանզի քու հօրդ Յովնարանի սիրոյն համար քեզի բարերարութիւն պիտի ընեմ ու քու մեծ հօրդ արտերը քեզի պիտի դարձնեմ»: Դաւիթ նախ անոր կեանք շնորհեց: Մեմփիփոսքէ մինչեւ այդ վայրկեան տակաւին վախսի մէջ էր որ կեանքը կրնար կորսնցնել: Տերը քեզի նոր կենաք տուաւ այն վայրկեանին երբ Յիսուսը ընդունեցինք, վախնալու պէտք չունինք որ մեր յաւիտենականութիւնը ի՞նչ պիտի ըլլայ: Քրիստոսի մէջ պահպանութիւն ունինք: Երկրորդ Դաւիթ խոստա-

ցաւ ժառանգութիւն տալ: Սաւուղի արտերը տալ Մեմփիփոսքէի: Տէրն ալ մեզի հոգեւոր պարզեներ, ժառանգութիւն եւ բարերարութիւն խոստացած է: Մենք արժանի չենք, բայց Քրիստոսի սիրոյն համար Տէրը մեզի այդ բոլորը խոստացած է:

Երրորդ, Դաւիթ ըսաւ Մեմփիփոսքէի. «Ու դուն միշտ իմ սեղանս հաց պիտի ուտես: Ի՞նչ մեծ պատի պիտի զգայ եթէ ձեզմէ մեկը նախազահին սեղանը հրաւիրուի: Դաւիթ Մեմփիփոսքէի ոչ թէ միայն կեանք շնորհեց, ոչ թէ միայն ժառանգ տուաւ, այլ նաև հրաւիրեց իր հետ ամէն օր սեղան նստելու: Տէրն ալ մեզի կ'ըսէ. «Ոչ թէ եկայ որ միայն կեանք ունենաք, ու յափտենականութիւնը ժառանգէք, այլ՝ եկայ որ դուք իմ հետս ամէն օր յարաբերութիւն ունենաք, իմ ներկայութեանս մէջ գտնուիք»: Տէրը ընդունեց մեզ եւ կը խնդրէ որ հետը ժամանակ անցնենք: Ի՞նչ երանելի պատկեր է – Դաւիթ խոստումը յարգեց եւ Մեմփիփոսքէն սիրալիք կերպով ընդունեց: Նոյնակս ալ իմ Երկնաւոր Հայրս Իր խոստումը տակաւին պատրաստ է յարգելու եթէ իմ անապատէս դուրս գամ եւ կադ վիճակովս Իրեն երբամ: Ան կ'ըսէ. «Եկուր ինձի եւ համտես Իմ ողորմութիւնս»:

Եթէ դուն տակաւին Մեմփիփոսքէ ես, տակաւին կադ ես, տակաւին անապատին մէջ եւ ու Աստուծմէ հեռու ես, Տէրը կ'ըսէ. «Եկուր, Քրիստոսով նոր կեանք պիտի տամ քեզի»: Որոշումը քեզի է: Իսկ եթէ արդէն համտեսած ես Իր ողորմութիւնը, զնա՛ եւ որիշներուն պատմէ: Խնդիր չէ թէ որիշը արժանի է կամ ոչ, Քրիստոսի սիրոյն ողորմութիւն ցուցուցէք այդպիսիներուն, ինչպէս Ինք ցուցուց մեզի: Դաւիթ Յովնաթանի խոստացած ողորմութիւնը կատարեց, եւ երբ Մեմփիփոսքէ Դաւիթի սեղանը կը նստէր սեղանին ծածկոցը անոր ոստքերը կը ծածկէին: Նոյնակս ալ տէրը երբ մեզ կը կանչէ, կ'ըսէ. «Եկուր, Իմ հետ սեղան նստէ», Ան կը ներէ ու մեր կադ ըլլալն անգամ կը մոռնայ որովհետեւ Քրիստոսի արդարութիւնը ծածկոցի պէս մեր տկարութիւններն ու մեր բերը կը ծածկէ երբ Տիրոջը ներկայութեան մէջ ըլլանք: Այս է խոստումը: Եկո՞ւր:

Յովան Եղբ. Գոյումճեան  
«Հատընտիր հոգեւոր պատզամներ»

## Յոր (1)

**Յ**որի մասին շատ բան կայ, որ չենք գիտէք, բայց այն ինչ գիտենք կարեւոր է: Սենք գիտենք, որ ան ապրած է Ուր երկրին մէջ: Որտե՞ղ կը գտնուէք այդ երկիրը: Սենք գիտենք, որ ան հարուստ եւ ուղղամիտ մարդ էր եւ հողագործութեամբ կը զբաղուէք: Ան եօթ որդի եւ երեք դուստր ունէք:

Կարեւոր տեղեկութիւնը, որ գիտենք Յորի մասին այն է, որ ան Աստուծոյ առջեւ ուղիղ էր: Աստուած կարող էր իրեն նայիլ ու ըսել, թէ անոր նմանը չկայ. ան կատարեալ, ուղիղ, Աստուածավախ ու չարէն հեռացող մարդ մըն էր:

Սատանան հակառակ կարծիք ունէք: Աստուած անոր հարցուց, թէ արդեօր Իր ծառայ Յորին ուշադրութիւն դարձո՞ւց: Սատանան պատասխանեց՝ այն՝ եւ ըսաւ, թէ Յորը Իրեն կը ծառայէ միայն օգուտ ստանալու համար: Եւ Եթէ Աստուած հեռացնէ իր ողջ ունեցուածքը, ապա Յորը կը հայինէ Աստուծոյ երեսին:

Ծիշտ է, կան մարդիկ, ովքեր Աստուծոյ կը ծառայեն շահի համար: Գուցէ ունինք ծանօթներ, ովքեր եկեղեցական ծառայութիւններուն կը մասնակցին, քանի որ ատիկա լաւ է իրենց պիզնէսի համար: Երբ Յորի պատմութիւնը կը կարդանք, կը տեսնենք, թէ անոր միսիքարողներն այդպէս կը մտածէին իր մասին: Անոնք Յորին խորհուրդ տուին հնագանդիլ Աստուծոյ, որպէսզի վերականգնուի իր նախկին դիրքը:

Երբ սատանան ըսաւ, որ Յորը Աստուծոյ երեսին կ'անիծէ, եթէ կորպնցնել իր ողջ ունեցուածքը, Աստուած անոր թոյլ տուաւ վնասել Յորի ընտանիքին եւ ունեցուածքին, բայց թոյլ չտուաւ Յորին դիպչել: Այս կերպ սկսաւ մրցոյթ մը: Սենք գիտենք, թէ այդ մրցոյթի ժամանակ ինչ փորձութիւն կը սպասէք Յորին, մինչ վերջինս զաղափար անզամ չտնէք, թէ ինչ կը կատարուի իր հետ:

Սատանան անմիջապէս գործի դրաւ իր ծրագիրը: Ան չդպաւ Յորի կնոջը, բայց յարձակուեց անոր ողջ ունեցուածքի եւ զաւակներու վրայ: Ասիկա խնամքով կազմակերպուած արշաւ էր: Սատանան մէկ օրուայ մէջ կազմեց երեք յարձակողական խումբ, որպէսզի գողնան Յորի բո-

լոր եզները, ոչխարներն ու ուղտերը, երբ Յորի զաւակներն իրենց աւագ եղրօր տանը խնջոյք մէջ էին: Յարձակումը համակարգուած էր այնպէս, որ մէկ մարդ կարողացաւ փախչիլ՝ վերադառնալու եւ Յորին պատմելու տեղի ունեցածի մասին: Այս երեք փրկուածները մէկը միւսի եւնելէն ժամանեց, որպէսզի մեծցնեն Յորի վրայ ազդեցութիւնը: Երբ երրորդն աւարտեց իր պատմութիւնը, չորրորդը եկաւ եւ յայտնեց, որ փորորդիկը կործանած է աւագ որդու տունը, եւ Յորի բոլոր զաւակները մեռած են:

Սատանան անշուշտ կը սպասէր, որ Յորը անիծէ Աստուծոյ: Բայց ան այդպէս չ'ըրաւ: Ան երկրպագութեան մէջ խոնարհեցաւ՝ ընդունելով, որ այս աշխարհ դատարկ եկած էր եւ այդպէս ալ պիտի հեռանայ անկէ: Տէրը տուած էր իրեն այդ ամէնը, եւ երէ Տէրը հիմա կը վերցնէ, ուրեմն բող Իր կամքը ըլլայ: Ան դեռ կը փափաքէր, որ Տիրոջ անունը գովարանուի:

Յորի արձագանքը ցոյց կուտայ, թէ ինչպիսի մարդ էր ան: Աստուծաշունչը կ'ըսէ, թէ ան Աստուծոյ չմեղադրեց սխալ արաքններու մէջ: Մեզ համար հարց է, թէ արդեօ՞ք մեր ունեցուածքն հեշտ կը հրաժարինք, այնպէս, ինչպէս Յորը, եւ երէ ամէն ինչ կորսնցնելու ըլլանք, արդեօք կընդունի՞նք այն, ինչ տեղի ունեցաւ՝ առանց Աստուծոյ մեղադրելու:

Սատանան պատրաստ չէր ընդունելու, որ ինքը լիովին սխալ գնահատած էր Յորի տեսակը: Ան փոխեց իր պատճառաքանութեան հիմքը՝ ըսելով, թէ մարդն ամէն ինչ կուտայ իր կեանքի դիամց: Այնուհետեւ ան պնդեց, որ երէ Յորի կեանքին դիպչի, ապա ան անպայման կ'անիծէ Աստուծոյ: Եւս մէկ անգամ Աստուծ, ով կը ճանչնար Յորին, թոյլ տուաւ սատանային յարձակիլ անոր վրայ: Յորը ցաւոտ վերքերով կը տառապէր՝ ոտքի քարէն մինչ գլուխը: Սակայն սատանան չդպաւ Յորի կնոջը. շատ շուտով ան կասկածի տակ դրաւ Յորի արաքնները եւ ըսաւ իրեն, որ Աստուծոյ անիծէ ու մեռնի:

Ուշադրութիւն դարձուցէք, թէ սատանան ինչպէս կը գործէ: Ան կը մեղադրէ Աստուծոյ ժողովուրդին ու կը փորձէ նսեմացնել իրենց: Ան չի միջամտէր այնտեղ, որտեղ կը կարծէ, թէ առաւելութիւն կընայ ստանալ: Մենք պէտք է միշտ զգայուն ըլլանք եւ պէտք չէ թերագնահատենք անոր զօրութիւնը: Բայց կան երկու կարեւոր ճշմարտութիւններ, որոնք

պէտք է յիշենք: Նախ՝ միայն Աստուած է ամենակարող, երկրորդ՝ սատանան կարող է գործել միայն Աստուծոյ կողմէ սահմանուած չափով:

Տնն Սբորմբ  
(Չարունակելի)

## **Փոփոխութիւններ ԱՅՀ-ի մէջ**

**«Նոյնապէս դուք, երբ բոլոր ձեզի հրամայուած բաները ընէք,  
ըսէք, թէ՝ «Մենք անպիտան ծառաներ ենք, քանզի ինչ որ  
պարտական էինք ընելու՝ ըրինք»» (Ղուկ. 17:10)**

**Ա**յս համարը ինձի նուիրած է իմ սիրելի եղբայրս 2010 թուականին Երեւանի մէջ, Հայաստան կատարած իմ առաջին այցի ժամանակ: Այս ճանապարհորդութիւնը հնարաւոր դարձաւ Հրազ Գույուճեանի սիրալիր հրաւերով, որու անունը հոնանիշ է «Ազգարարութեան փող» թերթի հետ: Սա այն ծառայութիւնն է, որը հիմնադրուեցաւ 54 տարի առաջ Հրազ եղբօր հօր՝ Արքօ Գույուճեան եղբօր կողմէ եւ հաւատարմօրէն կը շարունակուի մինչեւ այսօր:

Այդ առաջին այցելութիւնն ի վեր ես քաջալերուած ու օրինուած եմ տեսնելով Հայ քրիստոնէական առաքելութեան եւ անոր ծառայակիցներու աշխատանքը, ովքեր հաւատարմօրէն Աւետարանը կը ներկայացնեն կարիքաւորներուն, ոչ միայն Հայաստանի, այլև Լիբանանի մէջ: Այս տարուայ Յուլիս 13-22-ին առաջին անգամ ըլլալով պատիւ ունեցայ Լիբանանի մէջ վերջին երեք տարիներուն մէջ ԱՅՀ-ի ծառայութիւնը վերահսկող Բաֆֆի Չափարեան եղբօր հետ Լիբանան այցելել:

Ես իսկապէս զգացուած եմ անցեալ տարուայ Յուլիս ամսին Հայ քրիստոնէական առաքելութեան ատենապետը կարգուելով: Ղուկաս 17:10-ի խորհմաստ խօսքերը կրկնելով՝ ես անպիտան ծառայ մըն եմ, միայն կ'ընեմ այն, ինչ պարտաւոր եմ ընել: Պարտական բառի համար օգտագործուած Յունարէն բառը այնքան տեղին է. այն կը նշա-

նակէ՝ պարտքը վճարել: «Պողոսի խօսքերով՝ ես ոչինչ եմ, բայց մենք կը յիշենք Տէր Յիսուսի միսիթարութիւնը. «Առանց ինծի բան մը չէք կրնար ընել» (Յովհ. 15:5):

Մենք կ'ուզենք քաջալերել ձեզ Տիրոջ գործին մէջ բաժին ունենալ, ինչպէս նախկինին ըրած էք՝ թէ՝ ձեր աղօքներով եւ թէ՝ գործնական աջակցութեամբ:

Երեւանի մէջ Տէրը մեզ նոր շէնք նուիրեց, որը կը կոչուի՝ Փարոս: Այս տարուայ միսիոներական առարելութեան մասնակցող անդամներուն կարողացանք շատ յարմարաւաէտ կերպով տեղաւորել այս շէնքին մէջ, եւ անհամբերութեամբ կը սպասենք աւելին ընել մեր յաջորդ ուղեւորութեան ժամանակ (Օգոստոս 30 - Սեպտեմբեր 16, 2024թ.):

Այս տարածքին մէջ նախատեսուած են աւելի շատ միջոցառումներ անցկացնել.

- Աստուածաշունչի շաբաթական ուսումնասիրութիւններ եւ Աւետարանի քարոզութիւն մեր խնամքի տակ գտնուող ընտանիքներու եւ այցելուներու համար:
- Մարտոն եղբայրը ծանրաբեռնուած է եղբայրական ժողովներ սկսելու համար:
- Մանկական ծառայութիւններ եւ հանդիպումներ՝ ACM-ի մեր աշխատակիցներուն խրախուսելու համար:

Հայաստանի եւ Լիբանանի շուրջ 150 ընտանիքներու աջակցութիւնը Տիրոջ շնորհքով կը շարունակուի: Մենք երախտապարտ ենք քոլոր անոնց, ովքեր այս տարիներու ընթացքին անձնուիրաբար իրենց ներդրումն ունեցան այս ծառայութեան մէջ: Մենք կը զնահատենք ձեր աղօքները ու հաւատքով եւ ակնկալութեամբ կը նայինք մեր Տիրոջը ու Անոր երեսը կը փնտռենք, որպէսզի Ան առաջնորդէ մեզ մինչ այս տարին կը մօտենայ իր վախճանին: Թո՞ն որ շարունակենք մեր Տիրոջ եւ Քրիստոսի համար ընել այն, ինչ պարտաւոր ենք ընել:

Տօքք՝ Դանիէլ Շէյմս